


00 AUG 2010



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Ս. ՎՐԱՅՅԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻԻ 4

1934

ՅՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ

ՎԱՀԱՆ ՄԻՆԱԽՈՐԵԱՆ

## Փ Ո Ւ Ր Ի Կ Ի Ց Ա Ռ Ա Ջ

(Պատերազմի 20 ամեակի առթիւ)

### I

#### ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Համաշխարհային պատերազմով ազգերի նորագոյն պատմութեան մէջ սկսում է մի նոր դարադուլ: Իբրեւ հետեւանք պատերազմի փոխւեցին առանձին երկրների սահմանները, ծնունդ առին նոր պետութիւններ: Ժողովուրդների մէջ «առաջինները դարձան յետին, յետինները՝ առաջին»: Ծնունդ առին տնտեսական - քաղաքական, մտաւոր - բարոյական նոր հարցեր: Կեանքը բոլորովին նոր կերպարանք ստացաւ:

Տեղի ունեցած փոփոխութիւնների կարեւորութիւնը, ապրած արհաւիրքների չափը մանաւանդ շատ մեծ է մեզ համար. հայ կեանքը բոլորովին չեղւեց իր բնականոն ընթացքից եւ մինչեւ օրս էլ չի կարողանում գտնել ուղիղ ճանապարհը: Պատերազմի սկզբնաւորութեան երրորդ տասնամեակին ենք թեւակոխել արդէն եւ սակայն մեր կեանքը դեռ լի է անհաշիւ հիւանդ երեւոյթներով, այնքա՛ն, որ պատերազմը կարծես երեկ է տեղի ունեցել:

Բոլոր այս հիւանդ երեւոյթների վրայից կարելի էր անցնել առանց ուշադրութիւն դարձնելու, եթէ նրանք այսքան անյուսալիօրէն երկար չտեւէին, եթէ խնդիրները տարբերէին եւ նոյն ձեւով չբացատրէին նաեւ հայ կեանքի խոշորագոյն հարցերը, նրա գերագոյն թշուառութիւնը՝ ջարդերը, պատերազմին մասնակցելը:



500-200/



«Ստուգւած փաստ պէտք է համարել, որ արեւմտահայերի դէմ էին կամաւորական շարժման: Նրանք պարզ էին պատկերացնում այդպիսի մի գործի հետեւանքները», գրում է Բ. Բորեանը («Հայաստանը, Միջագոյսին Դիւանագիտութիւնը եւ Խորհրդ. Ռուսաստանը» հատ. ա. էջ 362): Եւ, հակառակ «արեւմտահայ զանգւածներին շեշտւած կամքին», որ արտայայտւել է էրզրումի «աղագային» ժողովում, Դաշնակցութեան Պոլսոյ կոմիտէն եւ Արեւելեան Բիւրօն, այնուամենայնիւ «որոշել են մասնակցել պատերազմին»:

Գալով այն հետեւանքներին, որ առաջ է բերել կամաւորական շարժումը, Բորեանը, յիշատակելով Գիբրնսի, Գուրկօ-Կրեմտինի այն տողերը, որոնց մէջ նրանք մեղադրում են երիտասարդ թիւրքերին ջարդերի առթիւ, «մեծահոգութեամբ» բացականչում է. —

«Ո՛չ, այդ գործի մէջ թիւրքերը չէին կարող հերոսներ լինել: Իմպերիալիստական պետութիւնների Ֆինանսական կապիտալի հաւաքական կամքով, ցարական Ռուսաստանի թելադրութեամբ, Դաշնակցութեան նենդ դաւաճանութեան շնորհիւ եւ դերմանական դահիճների ձեռքով է ոչնչացել արեւմտահայ ժողովուրդը» (Անդ, էջ 368):

Այսպիսով, հայ յեղափոխական դէմոկրատիան՝ ի դիմաց Հ. Յ. Դաշնակցութեան՝ նախ մեղադրւում է «պատերազմ յայտարարւելու» մէջ, ապա՝ այդ պատերազմին «կամաւորական շարժման» ձեւ տալու եւ, վերջապէս, նաեւ ... ջարդերի մէջ:

Ահա մի ուրիշ, աւելի իրադեկ մարդու կարծիք: Հանդուցեալ Լէօն նոյն հարցի մասին գրում է. —

«Պատերազմի յայտարարումից մի քանի օր առաջ Դաշնակցականների ընդհանուր ժողովն էր էրզրումում: Երիտասարդ թիւրքերի կուսակցութեան կողմից յատուկ ներկայացուցիչ է դալիս եւ առաջարկում է Դաշնակցութեան սկսող պատերազմի ժամանակ միանալ թիւրք-դերմանական դաշնակցութեան, ապստամբութիւն յարուցանել Կովկասի հայութեան մէջ ռուսների դէմ: Փոխարէնը խոստանում էր հայկական ինքնավարութիւն ռուսական Հայաստանի սահմաններում: Այս դերմանական ծրագիր էր, որի նպատակն էր Անդրրկովկասեան բոլոր ազգութիւնների - վրացիների, հայերի եւ թիւրքերի ընդհանուր ապստամբութեան միջոցով վտարել ռուսներին կովկասեան գլխաւոր շրջայի հիւսիսային կողմը, այնպէս որ այդ շրջան դառնար սահմանը թիւրքիայի եւ Ռուսաստանի մէջ, իսկ երեք ապստամբւած ազգութիւնները կը կազմէին ինքնավար նահանգներ թիւրքիայի հովանաւորութեան տակ: Վրաստանի հետ բանակցութիւնները համարեա միաժամանակ էին սկսւած եւ նրանց



մէջ գտնւեցին տարրեր, որոնք երկու ձեռքով բռնեցին այդ առաջարկութիւնը եւ նոյնիսկ դաշնադրութիւն կնքեցին Թիւրքիայի հետ որ հրատարակեց սուսական ցարիզմի անկումից յետոյ:

«Էրզրումի կուսակցական ընդհանուր ժողովը երիտասարդ թիւրքերի առաջարկութեան առթիւ կայացրեց մի վճիռ, որ միակ կարելին էր սալի եւ կռանի մէջ տրորւող մի փոքր ազդուութեան համար: Նա չընդունեց երիտասարդ թիւրքերի առաջարկութիւնը՝ յայտարարելով, որ Դաշնակցութիւնը ծագող պատերազմի մէջ իրեն չէզոք կը պահէ: Բայց բարձր մարմնի այս որոշումը մնաց մեռած տառ թղթի վրայ: Հարցը վճռողներ հանդիսացան Կ. Պոլսի կոմիտէն եւ Կովկասի Արեւելեան Բիւրօն: Դաշնակցութիւնը չէզոք չէ, այլ միանում է ռուսներին եւ տալիս է նրան այն, ինչ մերժել էր թիւրքերին — կամաւորական խմբեր պատերազմ մղելու համար եւ ապստամբութիւն Թիւրքաց Հայաստանում:

«Եւ փաստեր շատ ունեմ պնդելու համար, որ այդ ոճրագործ որոշումը կայացել էր ոչ միայն առանց բռն երկրի գիտութեան, այլեւ հակառակ նրա ցանկութեան: Իր տեղում ես կը պատմեմ այդ փաստերը, այստեղ միայն այն կասեմ, որ ժողովուրդը Կ. Պոլսի եւ Թիֆլիսի պոռոտախօսներից շատ լաւ էր հասկանում իր դրութիւնը եւ միայն մի բան էր ցանկանում — որ իրեն թոյլ տրւի անցկացնել պատերազմական փոթորիկը, ինչպէս ինքը կարող էր: Այսպէս չեղաւ, դժբախտաբար: Այդ ժողովուրդը՝ անմեղ եւ անլեզու մի ամբողջ՝ «փրկիչներ» չափազանց շատ ունէր եւ նրա համար, դրա հետեւանքով, փրկութիւն չէր մնում այլեւս» («Անցեալից» էջ 285-6):

Այս խնդրի մասին դրել են ուրիշ շատերը, բայց ոչ ոք այնպէս մանրամասնօրէն չի արտայայտել իր մեղադրանքները, ինչպէս Լէօն: Լէօնի ակնարկած «փաստերը» ոչինչ չեն աւելացնում նրա ասածների վրա եւ ըստ էութեան մնում են նոյն մեղադրանքները, ինչոր տարրեր ձեռով կրկնում է Բորեանը եւ ուրիշները:

Պատերազմի սկզբնաւորութեան հետ կապած դանազան «պատասխանատուութիւնները» խնդիրը ժամանակակից գրականութեան մէջ քննութեան է առնւում փաստաթղթերի կամ վէճ չվերցնող դէպքերի հիման վրա: Մեր մէջ ընդունւած է հարցի լուսաբանութեան «պարզ» ձեւը: Եւ հայ յեղափոխականների դէմ ուղղւած մեղադրանքների հիմնաւորման համար ոչ փաստաթուղթ կայ, ոչ անվիճելի դէպք: Բորեանը իր ասածները հիմնաւորելու համար կարիք է զգացել դիմելու իր «անձնական արխիւի» օգնութեան եւ յիշատակում է մի փաստաթուղթ, որը իբր թէ Հ. Յ. Դաշնակցութեան «գլխւորական մարմնի» ներկայացուցիչի զեկուցումն է եւ որի մէջ



այդ ներկայացուցիչը Բորեանի հաւաստիացումով Շահրիկեանի հետ միասին, «արեւմտահայ» դարձնելով նաեւ Զորեանին, նրանց անունով, բողոքում է «արեւելահայերի» քաղաքականութեան դէմ...

Լէօն գրում է «ապստամբւելու», «պատերազմ յայտարարելու» մասին, որոնք փաստօրէն տեղի չեն ունեցել՝ դէպքերից առաջ: Իսկ ընդհանրապէս շատ տարածւած է այն մեղադրանքը, որը դուրկ է նաեւ այս նւագագոյն հիմնաւորումներից: Այս ընդհանրացած ձեւով խօսւում է «կամաւորական շարժման» եւ նրա հետեւանքով առաջացած ջարդերի մասին...: Խնդիրը ներկայացւում է այնպէս, որ կարծես մարդիկ առանց պատճառի «կամաւորական շարժում» սարքեցին: Ոչ ոք չի նշմարում, որ «կամաւորական շարժում» ասածը ինքնին անքննադատ, համաժողովրդական շարժում էր, որ չէր կարող առանց խորունկ եւ շեշտած պատճառների առաջ դալ: Մարդիկ ճգնում են այդ ազգային շարժումը սեղմել, կրճատել, գունաւորել այնպէս, որ դուրս գայ, թէ դաշնակցականներից բացի ոչ մի հայ երբեք կամաւոր չի եղել եւ այդ շարժման էլ չի համակրել: Հարցը անգամ այս ձեւով չի պարզում խնդիրը:

Ըստ էութեան Թիւրքիոյ հպատակ բոլոր ազգերի կեանքի մէջ տեղի ունեցած անհաշիւ ջարդերը բնաւ արդիւնք չեն այդ ժողովուրդների «կամաւորական շարժման»: Մասնաւորապէս հայ կամաւորական շարժումը սկիզբ է առել դէպքերից յետոյ, եւ մեզ հասած թշւառութիւնը կարելի է «գայլի ու դառան» առածի եղանակով պարզաբանել: Մնաց որ կամաւորական շարժումը այդ օրերին միայն հայերին յատուկ չէր. Թիւրքիայում իսլամ վրացիների 11 հազարնոց մի կամաւորական բանակ կար, որ գտնւում էր տրապիզոնցի Մուրադ բէյի ղեկավարութեան տակ եւ պէտք է կուէր ուսանելի դէմ: Պիլսուդսկին իր լեհական լէգիոնով կուում էր գերմանացիների բանակում: Արաբ կամաւորները կուում էին անգլիացիների կողքին եւ այլն:

Այսպիսով՝ խնդիրը ոչ թէ կամաւորական շարժման մէջ է, այլ այդ շարժման ծնունդ տուող պատճառների: Հայ յեղափոխականների քննադատները խնդիրը այս ձեւով չեն դնում, որովհետեւ լաւ գիտեն, որ նման հարցադրութիւն տրամաբանօրէն պէտք է յանդի հայ ազատագրական դարաւոր շարժման հիմքերին, հայ քաղաքական օրիէնտացիայի հարցին, որոնք հայ յեղափոխականները չեն ստեղծել ...:

Դէպքերին իրազեկ քննադատները «կամաւորական շարժումը» կապում են պատերազմի սկզբնաւորութեան հետ. այդ շարժման տա-



լիս են «պատերազմ յայտարարելու» ձեւ, որի իմաստը այս դէպքում պատերազմին մասնակից լինելու մեղադրանքն է :

## II

### ԹԻՒՐՔԻԱՅԻ ԶԵՁՈՔՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Մեծ պատերազմը այժմ յիշողութիւնների շարքն է անցնում, մօտ ապագայում «պատմական անցեալ» դառնալու համար : Ըստ երեւոյթին միայն այդ դէպքում կը լուծւեն պատերազմի հետ կապւած բարդ խնդիրները : Մեզ համար այժմ պարզ է, որ հրդեհը ծագելով չորս պետութիւնների մէջ՝ տարածւեց ամէն կողմ եւ լափեց ինչ որ կարող էր . պատերազմին լծող պետութիւններից մեծերը միայն գերիշխան էին : Իտալիան, Ամերիկան, Ճաբոնիան ինքնակամ կերպով յարեցին պատերազմին եւ թէ ցանկանային՝ կարող էին մնալ չէզոք : Փոքր պետութիւնների պատերազմին մասնակցելու խնդիրը կախած էր իրենց կամքից : Նրանցից ոմանք պատերազմի մէջ ընկան դէպքերի դարգացման բերումով, բայց մեծ մասը՝ իր ազդային քաղաքականութեան հետ միասին, հարկադրւած էր հաշի առնել եւ իր ընթացքը ճշտել դրսի մեծ ուժերի մղման թափից դըրդւած : Այս տեսակէտով բոլորովին բացառիկ դրութեան մէջ էր Թիւրքիան :

Ինչ վերաբերում է պատերազմող պետութիւններին հպատակ այն ժողովուրդներին, որոնք նոր պէտք է կազմաւորւէին, երկիր, պետութիւն դառնային, նրանք առանց բացառութեան պատերազմի մէջ մտան իրենց կամքից անկախ՝ մեծ ուժերի կամ դէպքերի մղումով, թելադրութեամբ, հարկադրանքի տակ եւ այլն : Անտարակոյս, այդ ժողովուրդներից իւրաքանչիւրը ունէր իր քաղաքական ձգտումները, յոյսերը, ակնկալութիւնները պատերազմից : Բայց այդ չէր, որ վճռական դեր կատարեց նրանց պատերազմին մասնակցելու խնդրում, այլ տիրող ազգերի, կառավարութիւնների բռնած դիրքն ու ընթացքը : Աւելորդ է ասել, որ այդ ժողովուրդներից իւրաքանչիւրի քաղաքական բախտը կապւած մնաց տիրող երկրի բախտի հետ : Այսպիսով՝ երբ անգլիական ու ֆրանսական զէնքի յաջողութիւնը ադատադրեց մի շարք ժողովուրդներ, նոր պետական կեանք ըստեղծեց նրանց համար . ուստիական զէնքի պարտութիւնը, աննախընթաց դժբախտութիւնների ենթարկելով մեզ՝ կէս դարով յետ մղեց հայ քաղաքական կեանքը :

Պատերազմի յայտարարութեան հէնց առաջին օրից կովկասահայութեան անելիքը շատ պարզ էր : Անկախ Տաճկահայաստանում ըս-



տեղծելիք դրուժինից, կամ Թիւրքիոյ բռնելիք ընթացքից, նա, իրեւ Ռուսաստանին հսկող ժողովուրդներից մէկը, պէտք է կատարէր իր քաղաքացիական պարտականութիւնները: Անստոյգ էր Թիւրքիոյ վիճակը, նրա բռնելիք ընթացքը, որից կախած էր արեւմտահայութեան դրուժինը: Եւ այս դէպքում, «Պոլսոյ կոմիտէն», կամ «Արեւելեան Բիւրօն» մեղադրելուց առաջ, անհրաժեշտ է պարզել Թիւրքիոյ այդ դրուժինը, հասկանալ պատերազմի մէջ նրա ունեցած ընթացքի հիմքերը, ճշտել տարրեր ընթացքների հաւանականութիւնները, բացատրել Թիւրքիոյ շուրջը այդ օրերին դարցող մեծ ուժերի զբաղակալութիւնները, որովհետեւ միայն այս հարցերի պարզաբանութիւնից է կախած ամէն բան, նոյն թուում նաեւ «Պոլսոյ կոմիտէի» եւ «Արեւելեան Բիւրօն» չար կամ բարի կամեցողութեան, ուղիղ կամ սխալ որոշման գնահատութիւնը:

Տարակոյս չկայ, որ արեւմտահայութեան, ինչպէս նաեւ հայ ազատագրական շարժման շահերի տեսակէտից հարցի լաւագոյն լուծումը Թիւրքիոյ չէզոքութիւնն էր: Այդ պարագային արեւմտահայութիւնը նոյնպէս պէտք է կարողանար մնալ չէզոք եւ թերեւս նաեւ խուսափէր ջարդերից: Պատերազմի նախօրեակին հայ յեղափոխական դէմոկրատիան յոգնատանջ մի վիճակ էր ապրում եւ, իր ամբողջ ջանքերով առաջ տանելով հայկական բարենորոգումների գործը, կարծես թէ իր յեղափոխական դերը կատարած վերջացած էր համարում եւ իր առաջ ունէր լուի մշակութային, տնտեսական շինարարութեան հարցեր: Եւ ով որ ցանկանայ պատերազմի նախօրեակին հայ յեղափոխականների Տաճկահայաստանում կատարած գործերը անաչառօրէն հասկանալ՝ պէտք է այդ եղրակացութեան յանդէ: Ո՛չ ապստամբելու ձգտում, ո՛չ «մեծ» կամ «փոքր» Հայաստան: «Բարենորոգում», ապահովութիւն, աշխատանքի հնարաւորութիւն, համերաշխութիւն, մտաւոր - բարոյական եւ տնտեսական վերաշինութիւն - այս էր հայ յեղափոխականների «կարգախօսը» պատերազմի նախօրեակին Երկրում: Իսկ լայն ժողովուրդական խաւերի մէջ տիրող քաղաքական հարցը բարենորոգումների խնդիրն էր: Ճիշտ է, բարենորոգումների նախկին ծրագրի փոփոխութիւնները ազդել էին տրամադրութիւնների վրա, բայց եղածն էլ մեծ յաջողութիւն էր համարում: Բարենորոգիչներից Հոֆը արդէն մտել էր Երկիր, գործի անցել: Եւ բնականոն կեանքի հաւանականութիւնը կարծես թէ մօտ էր իրականութիւն դառնալու:

Բոլոր այս հիմքերով հայ յեղափոխականները պատերազմի սկզբին համոզւած խաղաղասէրներ էին: Նրանք ջերմ կողմնակիցներ



էին թիւրքիոյ չէզոքութեան, եւ դէպքերը ցոյց տւին, որ միանգամայն իրաւացի էին:

Պատերազմի հետեւանքների ընդհանուր հաշւառումը բաւական է, ցոյց տալու համար, թէ չէզոքութիւնը օգտակար էր թիւրքիոյ համար: Յայտնի է, որ նախապատերազմական թիւրքիան 19-րդ դարու վերջին եւ 20-րդի սկզբին հաւասար էր 3896 հազար քառ. կիլոմետրի 38,750 հազար բնակչութեամբ: Այսօրայ թիւրքիան բռնում է 762,700 քառ. կիլոմետր մի տարածութիւն, եւ ըստ իրենց՝ թիւրքերի վիճակադրութեան՝ 13,660 հազար բնակչութեամբ: Այսպիսով, եթէ չենք կարող պնդել, թէ թիւրքիան չէզոքութեան դէպքում կը փրկէր, չենք էլ կարող ասել, թէ աւելի կը տուժէր, քան տուժեց: Ամէն պարագայի տակ հայ յեղափոխական դեմոկրատիայի չէզոքութեան ձգտումը, երկրի տնտեսական, մշակութային աշխատանքներին լծելու տենչը, փոխադարձ հասկացողութեան գալու համար կատարւած ջանքերը եւ առ հասարակ տիրող ընդհանուր հակապատերազմական տրամադրութիւնները նկատի ունէին ոչ միայն հայերի, այլ եւ թիւրքիոյ շահերը:

Սակայն, թիւրքիոյ չէզոքութեան խնդիրը դիւրին հարցերից չէր, որովհետեւ թիւրքիան այն երկրներից մէկն էր, որի բախտը խոշոր չափով կախւած էր մեծ ուժերի փոխյարաբերութեան ելքից:

Թիւրքիան պատերազմի գլխաւոր առարկաներից մէկն էր: «Կռիւը մեր մօրթը բաժանելու վրա է», ասում էին իրենք թիւրքերը: «Եթէ չմասնակցէինք պատերազմին, կողմերից մէկն ու մէկը յաղթութիւն չահելով՝ վերջ կը տար թիւրքիոյ գոյութեան», ասում էր Բագլի Արեւելեան ժողովուրդների առաջին համագումարին եկած թիւրք պատգամաւորը: «Երբ սկիզբ առաւ պատերազմը, գրում է դերմանական գիւանդէտներից Հելֆերիսը, Պոլսոյ եւ ոչ մի պետական գործիչ չէր կասկածում, որ դաշնակիցների յաղթութեան պարագային Ռուսաստանը կը նւաճէ Պոլիսը եւ ոչ ոք չի գտնւի, որ նրան արգիլէ այդ բանը: Ռուսաստանը վերջերս չափազանց շատ էր յայտարարում, որ ճանապարհը դէպի Պոլիս անցնում է Բերլինի եւ Վիեննայի վրայով: Այսպիսով, անկախ թիւրքիոյ մասնակցութիւնից կամ չէզոքութիւնից՝ պատերազմը առաջին իսկ օրից, նրա գոյութեան շուրջն էր դառնում» (Ե. Ադամով, «Ասիական թիւրքիոյ Բաժանումը», Մոսկւա, 1924, էջ 54):

Անգամ ոուս ծովային գլխաւոր շտաբի պաշտօնաթերթը գրում էր. «Ձի կարելի ժխտել, որ թիւրքիան անտանելի դրութեան մէջ է: Եւ եթէ մենք մեզ նրա տեղը դնենք, կարող կը լինենք հասկանալ, որ չի կարող լինել թիւրքերի մէջ յատուկ հաւատ, թէ չէզոքութեան



դէպքում Թիւրքիոյ հողերը կը մնան անձեռնմխելի այս մեծ պատե-  
րազմին մէջ» :

Բոլոր այս ենթադրութիւնները, տրամադրութիւնները Թիւրքիոյ  
մասին, ի հարկէ, հիմքերից զուրկ չէին : Բայց կան նաեւ հակառակ  
ուղղութեամբ փաստեր, որոնք պարզում են, թէ անհնարին չէր նաեւ  
չէզոքութիւն պահպանելը, Թիւրքիոյ համար նպաստաւոր մի ձեւով :  
Նախ եւ առաջ Թիւրքիոյ չէզոքութեան կողմնակից էին Ֆրանսան եւ  
Անգլիան . առաջինը վախենում էր վտանգել իր խոշոր տնտեսական  
չահերը, երկրորդը՝ առիթ առնուելուն դէնքով դրաւելու Պոլի-  
սը : Ապա նոյնիսկ իրենք ռուսները, երբ հասկացան գերմանական  
ռազմականութիւնը՝ Գեօրգիյի եւ Բրեսլաուի նեղուցներում ապաստանե-  
լու վտանգը եւ զգացին գերմանական դէնքի առաջին հարածները  
Արեւելեան Պրուսիայում, սկսեցին աւելի լուրջ վերաբերմունք ար-  
տայայտել դէպի Թիւրքիոյ խնդիրը : Այսպէս, օրինակ, օգոստ. 2(15)-  
ին Սազոնովը հռազդում է ռուսական դեսպան Բենկենդորֆին Լոն-  
դոն . «Ֆրանսական կառավարութեան առաջարկի համաձայն, բարի  
եղէք Գրէյի եւ Կամբոնի հետ միասին քննութեան առնել անհրաժեշտ  
միջոցները, Թիւրքիոյ կողմից Գեօրգիյը գնելու առթիւ ստեղծւած դը-  
րութեան մասին : Իմ կողմից հնարաւոր եմ համարում ներկայացնել  
հետեւեալ առաջարկութիւնները .»

«1) Իր չէզոքութեան անկեղծութիւնը ապացուցանելու համար  
Թիւրքիան ձեռնարկում է բանակների ցրման :

«2) Դրա փոխարէն երեք պետութիւնները երաշխաւորում են  
Թիւրքիոյ հողային անձեռնմխելիութիւնը եւ այդ առթիւ պատրաստ  
են քննութեան առնել ամէն մի առաջարկ :

«3) Թիւրքիան ստանում է Փոքր-Ասիոյ մէջ Գերմանիոյ ունեցած  
բոլոր տնտեսական, երկաթուղային եւ այլ ձեռնարկութիւնները եւ  
նրա այդ իւրացումը երաշխաւորում է հաշտութեան դաշնադրով :

«Յանկալի ենք գտնում, որ Պոլսի երեք դեսպաններին շտապ  
ցուցմունքներ տրւին : Միաժամանակ պատրաստ ենք քննութեան առ-  
նել ամէն մի առաջարկ, ինչպէս նաեւ ձեռք առնել հարկադրական  
միջոցներ՝ եթէ պարագաները պահանջեն» (Ադամով, էջ 61) :

Բայց որքան Թիւրքերը պատերազմի սկզբին ահաբեկւած էին, զուրկ  
ուէ յաւակնութիւնից, այնքան յաջորդաբար համակեցին ռազմական  
տրամադրութիւններով, և համաձայնութիւնը զժլարացաւ ու վիժեց :

### III

ԹԻՒՐԻՔ - ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Եթէ Թիւրքիոյ պատերազմին մասնակցելը անխուսափելի էր,



նշանակում է հիմքից վերացում է եւ արեւմտահայութեան «չէզոքութեան» խնդիրը: Սրա հետ միասին կարելի է ասել, որ գալիք հայկական աղէտը առարկայօրէն այլեւս հնարաւոր էր եւ կախաձէր միայն այն հարցից, թէ որի՞ հետ եւ որի՞ դէմ պէտք է պատերազմէր Թիւրքիան: Կասկած չկայ, որ եթէ Թիւրքիան պատերազմէր համաձայնական պետութիւնների կողքին, չէր կարող իրագործել բնաջնջման դիւային ծրագիրը: Ռուս պատմաբան Տարլէն խօսելով հայկական ջարդերի մասին՝ ասում է. «Ձեռնարկութիւնը տեսականօրէն խիստ յանդուգն էր, բայց գործնականապէս իրագործելի պատերազմի ընթացքում»: Նա նկատի ունի Թիւրքիոյ կղզիացումը, որը անհրաժեշտ նախադրեալներ ստեղծեց նման մի յանդուգըն» ծրագրի գործադրութեան համար: Այդ նախադրեալների արժէքը պարզելու համար բաւական է ասել, որ Բերլինի վեհաժողովից ի վեր մեծ պատերազմը միակ առիթն էր, երբ հայն ու Թիւրքը դէմ առ դէմ էին գալիս առանց «երրորդ» կողմի, երբ Թիւրքերը կարող էին զանց առնել բոլոր դիւանագիտական կաշկանդումները, միջամրտութեան վախերը, մի խօսքով՝ ա՛յն ամէնը, որ մէկ կողմից առիթ էր տալիս Համիդէին ջարդեր սարքելու, միւս կողմից խանգարում էր բնաջնջումի լրիւ ծրագրի գործադրութեան: Դաշնակից պետութիւնների հետ միասին պատերազմին մասնակցելու դէպքում, Թիւրքիան պէտք է մնար Եւրոպայի նախկին ազդեցութեան տակ եւ, ի հարկէ, խօսք չէր կարող լինել հայերի բնաջնջման դիւային ծրագիրը իրագործելու մասին: Ինքնին հասկանալի է, որ այս դէպքում մի նապագային լուծում կը ստանար նաեւ հայկական հարցը՝ կամ արդէն որոշաւ՝ բարենորոգումների գործադրութիւնով, կամ որեւէ «օճախ» ստեղծելով Թիւրքիայում: Իսկ այդ նշանակում էր վերացընել կամ թուլացնել հայերի բնաջնջման հիմնական պատճառը: Այս պարագային Ռուսաստանն ու Թիւրքիան, բոլոր վիճելի հարցերի հետ մէկտեղ, որոշ համաձայնութեան եզր կարող կը լինէին գտնել նաեւ Հայաստանի նկատմամբ: Վերջապէս երկու Հայաստանների շուրջ երեք միլիոնի հայութիւնը բաւական պատկառելի ոյժ էր, որը կարելի կը լինէր պատերազմի ընթացքում լաւագոյն կերպով օգտագործել Թիւրք-համաձայնական պետութիւնների շահերի համար, քան թէ ոչնչացնել. մի բան, որ հակառակ տիրող կարծիքների, ոչ մի ձեւով չէր կարող օգտակար լինել ռուսների համար:

Խորհուրդների հրատարակած գաղտնի փաստաթղթերի ընթերցումից կարելի է գալ այն եզրակացութեան, որ այս կարգի քաղաքական մի դրութեան գոյութիւնը անհնարին չէր: Պոլսոյ դեա-



պան Գիրսը 1914 թ. յուլ. 23 (օգ. 5) թւակիր հեռագրով հաղորդում էր Սաղոնովին. —

«Էնվերը ոչ միայն հաւատացնում է զինւորական կցորդ զօր. Լէոնտիւսին, թէ Թիւրքիան ներկայումս ոչ մէկի հետ կապւած չէ եւ պէտք է դործի իր շահերի համաձայն, այլ եւ շեշտում է Ռուսաստանի կողմից Թրքական բանակը օգտագործելու կարելիութեան վրա: Այդ կարող է տեղի ունենալ Ռուսաստանի դէմ դուրս ելնող այս կամ այն բաղկանեան պետութեան ուժերը չէզոքացնելու, կամ Աւստրիոյ դէմ բաղկանեան պետութիւնների դործողութիւններին ոյժ տալու նպատակով, եթէ այս դէպքում Ռուսաստանին յաջողի բաղկանեան պետութիւնները իրար մէջ եւ Թիւրքիոյ հետ հաշտեցնել, փոխադարձ զինողութիւնների հիմքերով: Զօր. Լէոնտիւսի այն հարցման, թէ ի՞նչ պայմաններ է առաջարկում Էնվերը, վերջինս պատասխանել է, թէ Թիւրքիոյ պայմանները կարող են կայանալ է-դէյեան կողմների եւ արեւմտեան Թրակիոյ ստացման մէջ. եւ այս դէպքում Յունաստանը կարող է փոխարինութիւն ստանալ Էպիրում, Բուլղարիան՝ Մակեդոնիայում, Սերբիան՝ Բոսնիա-Հերցեգովինա-յում: Լէոնտիւսի մի քանի տարակուսանքների առթիւ, Էնվերը վրձ-ռականապէս ասել է, թէ ինքը որեւէ կասկած չունի Թիւրքերի կող-մից այդ կարգի մի համաձայնագրութիւն ստորագրելու մասին եւ թէ իր առաջարկին հաճոյքով կը միանայ կառավարութիւնը եւ ժո-ղովուրդը, եթէ, ի հարկէ, տեսնեն, որ դրանից իրական օգուտ կայ» (Ադամով, էջ 56):

Այս առաջարկի լրջութեան մասին մեզ դադարիար է տալիս Գիր-սի երկրորդ հեռագիրը Սաղոնովին, նոյն օրը. —

«Էնվերը ասաց, որ եթէ այդ համաձայնութիւնը կայանայ, նա պատրաստ է գերմանացիներին (այսինքն գերմանական զինւորական առաքելութեան սպաներին) ասել. — «այժմ դուք մեր թշնամիներն էք եւ խնդրում եմ ձեզ հեռանալ»:

Նմանօրինակ հաւաստիացումներ է անում այս առթիւ Գիրսին նաեւ բուլղարական դեսպան Տոչեւը: Եւ երկու օր յետոյ Գիրսը նո-րից հեռագրում է Սաղոնովին. —

«Զինւորական նախարար Էնվերը յայտնեց, որ կանգնած է Ռու-սաստանի հետ դաշնակցելու իր նախկին տեսակէտի վրա... Հակա-ռակ տիրող կարծիքին, Թիւրքիան դեռ կապւած չէ երեակ զինակ-ցութեան հետ: Նա՝ Էնվերը գիտէ, որ գերմանական եւ աւստրիա-կան դեսպանները մեծ ճնշում են գործադրում կառավարութեան վրա... Զինւորական նախարարը հարցը դնում է պարզ ու որոշ այս-պէս. իրենց բարի դիտաւորութիւնների մասին լիակատար երաշխիք



տալու համար, թիւրքերը քաշում են կովկասեան սահմաններից այն ամենը ինչ ունին այնտեղ եւ կովկասեան պորքերի մեծ մասը նետում են Արեւմտեան ճակատ: Միաժամանակ Թրակիայում նրանք անմիջապէս կազմում են մի ուժեղ բանակ, որը դնում են մեր տըրամադրութեան տակ՝ բալկանեան պետութիւններից իւրաքանչիւրի, նոյն թւում նաեւ Բուլղարիոյ դէմ դործածելու, կամ նրանց հետ միասին Աւստրիոյ դէմ դարձնելու համար: Այն օրը որ տեղի ունենայ համաձայնութիւնը, էնվերը պարտաւորւում է թրքական ծառայութիւնից հեռացնել բոլոր գերման սպաներին: Իրեւէ փոխադարձութիւն, էնվեր-փաշան ցանկանում է, որ Թիւրքիային վերադարձեն Արեւմտեան Թրակիան եւ Էդէյեան կղզիները, ապա նաեւ ուզում է, որ Ռուսիոյ հետ 5-10 տարւայ պաշտպանողական դաշինք կնքւի, որպէսզի Թիւրքիան կարողանայ իրեն ապահովել բալկանեան հարեւանների հաւանական վրէժխնդրութիւնից»:

Դիւանագիտական պայքարի այդ վճռական օրերին խնդիրը գնալով հրատապ բնաւորութիւն է ստանում: Յուլիս 27 (օգ. 9-ին) Գիրսը դարձեալ հեռագրում է Սադոնովին.—

«Պարտք եմ դրում յայտնելու, որ մեզ անհրաժեշտ է անմիջապէս ընդունել էնվերի առաջարկը, առանց որեւէ մէկի հետ այդ մասին նախնական բանակցութիւնների մէջ մտնելու, որովհետեւ ժամանակը շատ կարճ է: Եթէ մենք յաղթող հանդիսանանք, միշտ կարող կը լինենք դոհացում տալ Բուլղարիային, Յունաստանին: Այն ինչ մեր մերժումը Թիւրքիային կը նետէ մեր թշնամիների դիրկը: Եթէ մինչեւ իսկ էնվերը կատարելապէս անկեղծ չէ, այնուամենայնիւ մեր համաձայնութիւնը, կը պարզէ դրութիւնը, որը ներկայ ձգտւած վիճակով չի կարող չվերջանալ խղովով»:

Յաջորդ օրը շտապ ցուցմունքներ խնդրելով՝ Գիրսը դարձեալ հեռագրում է Սադոնովին.—

«Նպատակը, որին միշտ պէտք է ձգտենք թշնամի գերմանական ազդեցութեան ոչնչացումն է Թիւրքիայում: Այդ նպատակին հասնելու համար յարմարագոյն առիթ է ներկայանում...: Մեծ վեզիրը դադունի կերպով յայտնեց ինձ, որ նա համակրում է էնվերի մեզ հետ մօտենալու ծրագրին եւ պատրաստ է բոլոր միջոցներով նըպաստել շտապ համաձայնութիւն գոյացնելու գործին...: Ես խորապէս համոզւած եմ, որ հասել է այն պատմական վայրկեանը, երբ մենք հնարաւորութիւն ունենք մեզ ենթարկելու Թիւրքիան եւ նրա միջոցով չէզոքացնելու Բալկաններում մեր դէմ դուրս գալու պատրաստուող ուժերը»:



Յուլ. 30 (օգ. 12-ին) Պետրոգրատի թրքական դեսպան Ֆահր-էդ-դինը նոյնպէս յարուցանում է Ռուսիոյ հետ դաշնակցելու խնդիրը, հետեւեալ հիմքերով. -

«Թիւրքիան հողային նւաճումների ոչ մի ձգտում չունի, բայց ցանկանում է իր հողային անձեռնմխելիութիւնը ասպնդել: Նա իր բանակը դնում է Ռուսաստանի տրամադրութեան տակ, եթէ այս պատերազմի մէջ դրա կարիքը զգացել: Թիւրքիոյ վարձատրութիւնը կարող է կայանալ Գերմանիոյ փոքր-ասիական երկաթուղային եւ այլ առանձնաշնորհումների իւրացման մէջ: Բացի այդ, Թիւրքիան կը ցանկանար, որ Ռուսաստանը խօսք տայ չափաւորակէի հայկական աղբային հոսանքների պահանջները, որովհետեւ Թիւրքիան վախ ունի Ռուսաստանի հայկական շրջանների նկատմամբ ունեցած ճրգ-տումների առթիւ»:

Հետաքրքրական է, որ Սադոնովը, յայտնելով Գիրսին թրքական դեսպանի առաջարկութիւնները, իր կողմից ընդունելի է համարում բոլոր պայմանները, բացի հայկական բարենորոգումներին վերաբերող կէտից...: Հետագայում, երբ Ռուսաստանը նւաճեց Հայաստանի մեծ մասը, պարզեց, որ Սադոնովը միտք ունի գոհանալու հայերին «դպրոցական-եկեղեցական ինքնավարութիւն» շնորհելով (Աղամով, էջ 209):

Ինչպէս երեւում է Գիրսի յաջորդ գրութիւնից, Ֆահր-էդդինը արտայայտում էր Պոլսոյ մէջ աւելի առաջ եղած տրամադրութիւնները եւ իրազեկ չէր տեղի ունեցած փոփոխութիւնների մասին: Սադոնովը Ֆահր-էդդինին այս ուղացած յայտարարութիւնից էր մեկնում օգ. 2 (15)-ին Բենկենդորֆին ուղղած իր հեռագրին մէջ: Միւս կողմից ժամ առ ժամ տեղի ունեցող փոփոխութիւններին տեղեակ Գիրսը այլեւս յայտնում է. -

«Այստեղ ամրանում է այն կարծիքը, թէ թիւրք-գերմանական համաձայնութիւնը արդէն կայացել է: Դէպի Անատոլիա զօրքեր ճամբելը կարծես թէ հաստատում է այդ բանը»...

#### IV

##### Հ. Յ. Դ. ԷՐԶՐՈՒՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Կարծում ենք պարզ է, որ ահաւոր դէպքերի կազմաւորման, մեծ ուժերի յարաբերութեան այս ճակատադրական շրջանում, հայ յեղափոխականների «կամեցողութիւնները» էական արժէք չունէին: Եւ սակայն հայ կեանքի ժամանակակից քննադատները շնչապատառ շարունակում են մօտ քսան տարի առաջ սկսած արշաւը...: Ռուս-թրքական բանակցութիւնների ընթացքում երբեմն թւում է, թէ





Հ.Յ.Գ.ԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐՆՈՅ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՐ



համաձայնութիւնը դրուի դալու վրա է: Իսկ այդ պարագային պարզ է, որ ինչ որոշում էլ կայացնելու լինէին «Պոլսոյ կոմիտէն» եւ «Արեւելեան Բիւրօն», արեւմտահայութեան կեանքն ու բախտը տարբեր ընթացք կը ստանար:

Քննութեան առնելով համաձայնութեան խնդիրը՝ Տարլէն դըրում է․-

«Էնվերը տալիս էր վճռական եւ անմիջական երաշխիքներ, ինչպէս օրինակ դերման սպաների հեռացումը եւ կովկասեան սահմաններում եղած զօրքերի յետ քաշելը: Հաղիւ թէ այդ բոլորը միայն խորամանկութիւն էր: Յամենայն դէպս, Ռուսաստանի շահը ուղղակի թելադրում էր պահանջել Էնվերի առաջարկած միջոցների անյապաղ դործադրութիւնը. չէ՞ որ այդ դէպքում վտանգւում էր միայն Թիւրքիոյ դրութիւնը»:

Բայց այդպէս չարտահայտեց, որովհետեւ միապետութեան դիւանագիտութիւնը չկարողացաւ ժամանակին հասկանալ իր իսկ դրութեան լրջութիւնը: Եւ այն օրերին, երբ Գրէյը դտնում էր թէ «ուժերի լարման անհրաժեշտութիւնը Գերմանիոյ դէմ պահանջում է Թիւրքիոյ հետ ընդհարելուց խուսափել», Ռուսաստանում մտածում էին օր առաջ Պոլսը նւաճելու մասին:

Պետերբուրգում Թիւրքիան հարկաւոր չէր դաշնակցի դերով, թէկուզ եւ ամենահամեստ եւ ամենախոնարհ վիճակով: Առհասարակ, Ռուսաստանին անհրաժեշտ էր ոչ թէ Թիւրքիան, այլ Պոլիսը, որը նւաճելու լաւագոյն միջոցը Թիւրքիոյ հետ պատերազմելն էր», դըրում է Զայոնհիովսկին («Համաշխարհային Պատերազմը», Մոսկւա, 1931, էջ 156):

Դիւանագիտական մեծ պայքարի այդ օրերին զնալով ուժեղանում է Թիւրք-բուլղարական համաձայնութեան հաւանականութիւնը: Միաժամանակ Գերմանիան ամէն կերպ աշխատում է Թիւրքիան իր ձեռք առնել: Գեօրգիի ու Բրեսլաուի եւ նրանց զօրական կազմի շրնորհիւ օրէջօր աճում էր դերմանացիների ազդեցութիւնը թրքական ծովային եւ ցամաքային ուժերի վրա: Գերմանական դիւանագիտութիւնը դուրս էր դալիս իր կաշից ապահովելու համար Թիւրքիոյ զինակցութիւնը, որ նրան հարկաւոր էր շատ տեսակէտներով: Ռուսաստանը նեղուցների միջոցով դաշնակիցներից դատելու, նոր ճակատ ստեղծելով նրա ուժերը ջլատելու, թրքական հում նիւթերով իրեն ապահովելու համար եւայլն: Եւ կատարուող աշխատանքները, ուղղակի եւ անուղղակի ճնշումները սկսում էին արդիւնք տալ: Թիւրք կառավարութեան մէջ գերմանացիների հետ զինակցելու



կողմնակից հոսանքը այլեւս տիրող էր հանդիսանում եւ համաձայնութեան խնդիրը դրական լուծում էր ստանում :

Այս պարագաների մէջ էր, որ սկիզբ առին էրզրումի բանակցութիւնները :

Հ. Յ. Դաշնակցութեան էրզրումի ընդհանուր ժողովը նոր էր ձեռնարկել իր աշխատանքներին, երբ վրա հասան պատերազմի չմեղուցիչ լուրերը<sup>\*)</sup> : Ժողովին մասնակցում էին Դաշնակցութեան հին փորձեալ եւ նոր լաւագոյն ուժերը : Մեզ թւում է, որ այդ ժողովի կազմի, տրամադրութիւնների, ձգտումների յայտարարը հանգուցեալ Ռոստոմն էր, որը եւ հրաւիրել էր ժողովը : Ռոստոմը էրզրումում թիւրքերի հետ հաստատել էր սերտ բարեկամական յարաբերութիւն եւ նրանց կողմից մեծ յարգանք էր վայելում : Այդ կարգի բարեկամական տրամադրութիւններով էր օժտւած նաեւ ժողովին եկած պատգամաւորների ստւարագոյն մասը : Ժողովը դումարել էր այլ նպատակների, այլ տրամադրութիւնների, այլ յոյսերի, այլ ձգտումների համար : Եւ այդ պատճառով, երբ մարդ յիշում է այդ ժողովի սկիզբն ու վախճանը, դիւրութեամբ հասկանում է խաբւած ու նահատակւած հայ ժողովուրդի ողբերգութիւնը . . . :

Պատերազմի մասին ստացւած հեռագրական լուրերի հետեւանքով, այդ հեռաւոր վայրում ստեղծւեց մանրամասն տեղեկութիւնների կարիքը : Այդ պատճառով, հեռագրւեց, որ հանգուցեալ Արմէն-Գարօն անմիջապէս մեկնի էրզրում : Պատասխան ստացւեց, որ Գարօն մեկնել չի կարող, նրա ներկայութիւնը խիստ անհրաժեշտ էր<sup>1</sup> Պոլսում : Արդէն վայրի հեռաւորութիւնը, շուրջ երկու շաբաթեայ ճանապարհ կտրելու անհրաժեշտութիւնը դէպքերի այդ արագ դարդացման շրջանում անխմստ էր դարձնում դիմումը :

Ստեղծւած պայմաններում չէր կարող խօսք լինել ժողովի բնականոն զբաղմունքների մասին : Այդ պատճառով, ամփոփելով մինչեւ այդ եղած աշխատանքները, անհրաժեշտ համարւեց քննութեան առնել ստեղծւած դրութիւնը եւ անցնել պատերազմի հարցին : Այս առթիւ ժողովականների ստւար մեծամասնութիւնը արտայայտւում էր այն մտքով, թէ հայ ժողովուրդը Կովկասում եւ Տաճկահայաստանում անկաշառ կերպով պէտք է կատարէ իր քաղաքացիական պարտականութիւնները՝ համապատասխան պետութիւնների նկատմամբ : Նախապէս երեք-չորս հոգի հակառակ էին այդ կարծիքին եւ առա-

\*) էրզրումի ընդհանուր ժողովին եւ մասնակցել եւ «հիւրի» հանգամանքով Ջանիկի Հ.Յ.Դ. շրջանային ժողովի եւ Պոլիս եղած դաշնակցական ընկերներից Սարգիս Բարսեղեանի հրաւերով. Վ. Մ. :



Ջարկում էին Արեւմտեան Հայաստանում ձեռնարկել ապստամբութեան (Սւազի երկու պատգամաւորները, խմբապետ Համազասպը եւ Եւրոպայի ուսանողական միութեան պատգամաւոր Տիգրան Խաչիկեանը) : Բայց վիճաբանութեան ընթացքում նրանք էլ միացան մեծամասնութեան բանաձեւին, բացի հանգուցեալ Համազասպից :

Յուլիսի վերջերին (հ. տ.) ընդհանուր ժողովի պարապմունքները արդէն ընդհատուած եւ պատգամաւորներին մեծ մասը ցրւած էր : Ժողովի կողմից ընտրւել էր Գ հոգինոց մի յանձնաժողով, որը պէտք է զբաղէր առկախ մնացած հարցերով :

Օգոստոսի սկիզբներին էրզրում հասան թիւրք յայտնի հետտոր Նաճի բէյը եւ Իթթիհադի գլխաւոր քարտուղար Բահաէդդին Շաքիրը : Մի քանի օր առաջ էրզրում էր եկել նաեւ հանգուցեալ Վառմեանը, որը վատտօրէն եւ վարում էր բանակցութիւնները մնացած ընկերների, յատկապէս, Ռոստոմի եւ Ակնունու, հետ համախորհուրդ :

Յիշում եմ Վառմեանի մի զեկուցումը բանակցութիւնների մասին, աւելի ճիշտ, ընկերական մի զրոյց, որ տեղի ունեցաւ Սանասարեան վարժարանի այդու անկիւններից մէկում : Ներկաներից յիշում եմ Ակնունուն, Ռոստոմին, Ս. Վրացեանին, Տէր - Մինասեանին : Վառմեանի ասածներից շատ պարզ էր, որ թիւրքերը համակւած են խիստ բարձր տրամադրութեամբ եւ այդ պատճառով ամէն մի խօսակցութիւն թիւրքիոյ չէզոքութեան, պատերազմից խուսափելու մասին դիտւում էր աւելորդ :

Թիւրքերը վստահ գերմանական զէնքի յաջողութեան վրա՝ չամոլւած էին, որ թիւրքիան պատերազմից դուրս կը դալ նպաստաւորւած : Նրանք վստահ էին, որ Ռուսաստանի յարձակման դէպքում իրենց կը յաջողի ոտքի հանել Անդրկովկասի, Հիւսիսային Կովկասի, Միջին Ասիոյ, մինչեւ իսկ Հնդկաստանի խաւմութիւնը եւ զրանով նեղը լծել ոչ միայն Ռուսաստանը, այլ նոյն իսկ Անգլիան : Այդ նկատումներով նրանք առաջարկում էին, որ Դաշնակցութիւնը կազմակերպւած ձեւով հանդէս դալ միաժամանակ թիւրքիայում, Կովկասում եւ արտասահմանում : Առաջարկում էին թիւրքիայում հայ կամաւորական բանակ կազմել եւ գործօն մասնակցութիւն ունենալ թիւրքալիքի աշխատանքներում : Ռուսաստանում եւ Կովկասում պայքար մղել միապետութեան դէմ եւ նպաստել ռուսների կովկասեան թիւրքերը քայքայելու : Արտասահմանում հանդէս գալ հայ թիւրքական համադորձակցութեան իմաստով եւ մի անգամ ընդմիջող ձեռք քաշել դրսի ուժերի միջամտութիւնից : Մի կողմ թողնել բոլոր ներքին խնդիրները, որոնք պատշաճ լուծում կը ստանան պատերազմից յետոյ :



Այս առթիւ շատ բան մնացել է իմ յիշողութեան մէջ նաեւ հանգուցեալ Ակնունու ասածներից, որի հետ այդ օրերին, դէպքերի բերումով, զուգորդեց մեր կեանքը:

Վռամեանը վերջացրեց իր խօսքը հարցումով - «մենք ի՞նչ ենք առաջարկում»: Ներկաներից եւ ոչ ոք պատասխան չտուեց հարցման, եւ բոլորն էլ համակած էին խիստ ծանր տրամադրութեամբ:

Եթէ չեմ սխալւում, Վռամեանի այս զրոյցից յետոյ տեղի է ունեցել եւս մէկ կամ երկու հանդիպում թիւրքերի հետ. ապա բանակցութիւնները վերջացան կամ անստոյգ զրութեան մէջ ընկան: Զեմ կարծում, թէ այդ հանդիպումները որեւէ նոր բան աւելացրած չինեն մեր ասածների վրա: Յամենայն դէպս ոչ Ակնունուց եւ ոչ մի ուրիշից հարցի մասին մենք նոր ոչինչ չիմացանք, բացի այն, որ Դաշնակցութիւնը, հակառակ թիւրքերի բոլոր պահանջներին կամ առաջարկներին, որոշել է մնալ ընդհանուր ժողովի բանաձեւի սահմաններում, որի իմաստը ոչ թէ «չէզոքութիւն» էր, ինչպէս կարծւում է սովորաբար, այլ քաղաքացիական պարտականութիւնների անայլալ կատարում ինչպէս կովկասում, նոյնպէս եւ Թիւրքիայում: Ըստ էութեան այդ որոշումը նկատի ունէր արեւմտահայութեան ընթացքը. կովկասահայերի քաղաքացիական պարտականութիւնների կատարման մասին երկու կարծիք չինել չէր կարող եւ այդ չէր, որ ճշտման էր ենթարկւում: Որոշման իմաստն այն էր, որ արեւմտահայութիւնը չպէտք է ապստամբւի, յատուկ ազգային խնդիր չպէտք է յարուցանէ պատերազմի ընթացքում. իր վրա ընկնող բոլոր քաղաքացիական պարտականութիւնները պէտք է կատարէ, բարեխիղճ, համբերող եւ պարտաճանաչ պէտք է լինի Թիւրքիոյ եւ Թիւրքերի հանդէպ: Այս ձեւով դրւած՝ խնդիրը այնքան էլ դիւրին չէր եւ պահանջում էր ղեկավար շրջաններից եռանդուն աշխատանք:

## V

### ԽԶՈՒՄ

Էրզրումի ընդհանուր ժողովի որոշումը, ինչպէս նաեւ բանակցութիւնների ընթացքում դաշնակցական ընկերների բռնած ընթացքը տեսութեան մէջ քննադատելի կողմեր չատ ունի: Եւ սակայն, ինչպէս էլ քննադատելու չինենք, պէտք է ընդունենք, որ ուրիշ ելք չկար: Ընդունել թիւրքերի առաջարկը, նշանակում էր պատուհասներ ստեղծել կովկասում եւ արկածախնդրութեան մէջ ընկնել, որովհետեւ այն, ինչ որ առաջարկւում էր, ոչ մի առնչութիւն չունէր ոչ հայ ազատագրական շարժման անցեալի, ոչ էլ կովկասահայութեան մէջ տիրող տրամադրութիւնների հետ: Միւս կողմից, մերժել թիւրք-



քերին, նրանց հետ թշնամանալու իմաստով, նշանակում էր մէկէն-  
իմէկ հարւածի տակ դնել արեւմտահայութիւնը:

Սրա հետ միասին, պարզ է, որ «քաղաքացիական պարտակա-  
նութիւնները» որոշումը ամենահեռուոր չափով անգամ չէր կարող  
դոհացնել թիւրքերին: Այդ վճռական օրերէն նրանց անհրաժեշտ էին  
թիւրք զէնքի յաջողութեան տենչով համակւած, ոգեւորւած հայեր:  
Անհրաժեշտ էր բացարձակ վստահութիւն, որ հայերը ոչ մի ձեւով  
չեն նպաստելու ոռւս զէնքի յաջողութեան ընդդէմ թիւրքերի: Անհր-  
աժեշտ էր անտարակուսելի համոզում, որ հայերը այս անգամ դը-  
րաւելու են Կարսը էրզրումից՝ թիւրքական բանակը Կովկաս առաջ-  
նորդելու համար: Անհրաժեշտ էր բացարձակ հաւատ առ այն, որ  
բոլոր հայերը մէկ մարդու պէս հրաժարելով հրաժարում են հայ-  
կական հարցից եւ այլեւս չեն արծարծելու այդ հարցը ոչ պատե-  
րազմի ընթացքում, ոչ յետոյ: Վերջապէս, անհրաժեշտ էր անայ-  
լայլ վստահութիւն, որ ոռւսները իրենց հերթին հրաժարւում են  
արեւելեան նահանգների նկատմամբ ունեցած դիտաւորութիւններից:

Եւ այս բոլորի դիմաց, յանկարծ՝ «քաղաքացիական պարտակա-  
նութիւններ»... Ի՞նչ էր այս թիւրքերի համար: - Պարա՛պ խօսք:  
Եւ քանի որ Դաշնակցութիւնը չէր ուզում հայ դիակներով թումբ  
կազմել Կովկասում Ռուսաստանի առաջ, նշանակում է բոլոր հայե-  
րը նպաստելու են ոռւս զէնքի յաջողութեան՝ թիւրքերի դէմ...

Տեսնում ենք, որ մեծ ուժերի դասաւորման տարուբերումների  
հետ փոփոխւում է նաեւ արեւմտահայերի բախտը: Մի դէպքում նը-  
րանք զերծ պիտի մնային բոլոր պատուհասներից - թիւրքիոյ չէզո-  
քութիւնը: Միւս դէպքում՝ պէտք է ազատւէին բնաջնջումից - ոռւս  
-թիւրքական համաձայնութիւնը: Բայց այդ ելքերը փակւում են հայ  
ժողովուրդի, նրա ղեկավար հայ յեղափոխականների կամքից միան-  
գամայն անկախ պատճառներով եւ պատերազմի հրդեհը կլանում է  
նաեւ թիւրքիան ու նրա հետ միասին՝ նաեւ արեւմտահայութիւնը:

Ենթադրել, թէ որեւէ մի ուրիշ ժողովուրդ թիւրքիայում, հաշ-  
ւելով նաեւ իրենց թիւրքերին, աւելի լաւ կատարեց իր քաղաքա-  
ցիական պարտականութիւնները թրքական զօրակոչի օրերին, նշա-  
նակում է մեղանչել ճշմարտութեան դէմ: Եւ սակայն այդ էլ ապար-  
դիւն անցաւ...

Այն օրերի հարցերը կարօտ են ընդարձակ լուսարանութիւնների,  
այնինչ մենք պետք է վերջացնենք մեր ասելիքները: Այն օրերին  
թիւրքերի ընթացքը մեր դէմ կտրուկ կերպով փոխեց: Կարելի է  
հաստատապէս ասել, որ նոյն այդ փոփոխութեամբ հիմքի մէջ ար-  
դէն լուծւած - վերջացած էր հայերի բնաջնջման խնդիրը: Նոր վե-

500 - 2001





բարերմունքի առաջին նշանն այն եղաւ, որ ոստիկանութիւնը պահանջեց ընդհանուր ժողովին մասնակցած ընկերների ցանկը: Բոլորի համաձայնութեամբ Ռոստոմը ներկայացրեց էրզրումի մէջ մնացած ընկերների անունները: Այնուհետեւ բոլորն էլ հսկողութեան տակ ընկան, այնպէս որ ամէն մարդ ճանաչում էր իր յետեւից պատող գաղտնի ոստիկանին: Արդէն ձերբակալել էին Բոլլար. պատգամաւորին: Բալաջանի տեղեկութիւններով նրան բանտում չարչարում էին, հասկանալու համար, թէ ինչպէս է պարսկական անցադիր ձեռք բերել: Նոյն օրերին ձերբակալեցին Ակնունուն եւ ինձ: Անձամբ իմ ձերբակալութեան մէջ, ի հարկէ, զարմանալու բան չեմ գտնում, բայց Ակնունու ձերբակալութիւնը բոլորովին անսպասելի էր եւ Իթթիհատի վերաբերմունքի տեսակէտով նշանակալից: Էրզրումից Պոլիս մեկնելուց առաջ Ակնունին պահանջեց ձերբակալող ոստիկանից նախապէս մեզ տանել Բէհաէդդին Շաքիրի մօտ: Բայց երեկւայ բարեկամը Ակնունուն չընդունեց. իբր թէ «բացակայ» էր: Թէեւ նոյն օրը երեկոյեան մեզ արձակեցին, բայց երկու օր յետոյ նորից ոստիկանութիւն տարին եւ պահանջ դրին 24 ժամայ ընթացքում հեռանալ էրզրումից՝ Ակնունին Պոլիս՝ ես՝ Սամսոն, սպառնալով, հակառակ պարագային, աքսորել:

Երեկւայ հաշտ բարեկամական յարաբերութիւնների այս փոփոխութեան համար ոչ մի առիթ չկար եւ «նոր» վերաբերմունքը այնքան տարօրինակ, այնքան անհասկանալի եւ անստոյգ էր թւում, որ Ռոստոմը առաջարկեց չենթարկւել եղած կարգադրութեան, որպէսզի կառավարութեան ընթացքը վերջնականապէս պարզւի: Յաջորդ օրը որոշւած ժամին, ի հարկէ, մեզ կառք դրին եւ ճամբայ հանեցին դէպի Տրապիզոն...

Ընդամենը մի ամիս առաջ մեր տեսած կենսութեան Տրապիզոնը այժմ սմբել ու կծկւել էր: Կարծես թէ մարդ չէր մնացել քաղաքում: Իջել էինք «Պալաս Օտելը»: Հակառակ եղած դժարութիւններին, Ակնունին տեղական ընկերներից ոմանց հրաւիրեց ժողովի: Հիւրանոցում հաւաքւել էին ութը-ինը հոգի: Ակնունին ղեկուցեց ընդհանուր ժողովի որոշման եւ թիւրքերի հետ եղած բանակցութիւնների մասին, վերը բերւած իմաստով: Յիշում եմ, որ խիստ տրհաճ տպաւորութիւն թողեց ներկաների վրա «քաղաքացիական պարտականութիւնները» որոշումը: Ժողովականներից մէկը, դերձակ Արչակը, այս առթիւ այնքան յուզեց, որ կիսատ թողեց Ակնունու ղեկուցումը եւ դալբութով հեռացաւ: Այստեղ ընդհանուր տրամադրութիւնը ի նպաստ ապստամբութեան էր եւ յանկարծ՝ «քաղաքացիական պարտականութիւններ»...: Առհասարակ այդ երկու բառե-



րից աւելի անժողովուրդական մի հասկացողութիւն երեւի երբէք չի եղել արեւմտահայութեան մէջ: Ասում եմ այդ նրա համար, որովհետեւ նոյն ձեւի ընդունելութիւն դառաւ նաեւ իմ ղեկուցումը Սամսոնում: Թէեւ ծովեզերքում տիրող մտայնութեամբ չեմ ուզում եզրակացութիւններ հանել երկրի ժողովուրդի տրամադրութիւնները մասին, բայց տարակոյս չկայ, որ դրութեան անտեղեակ մարդկանց այն հաւաստիացումը, թէ արեւմտահայութիւնը դէմ էր, իսկ կովկասահայութիւնը կողմնակից աղստամբութեան՝ առնւազն միակողմանի է: Այսպէս թէ այնպէս, այդ տրամադրութիւնները չէին, որ լուծում էին ճակատագրական հարցերը...

Այդ նոյն օրերին, ինչպէս տեսնում ենք եղած փաստաթղթերից, դրութիւնը Պոլսում գնալով լրջանում էր: Բոլոր գործերը կեդրոնանում էին ղինտորականների ձեռքը, որոնք, գերմանացիների ճնշման տակ, ամէն կերպ աշխատում էին Ռուսաստանի դէմ պատերազմի մղել թիւրքիան: Գերմանական ղէնքի յաջողութիւնները ուժեղացնում էին պատերազմի կողմնակիցների դիրքը: Օդ. 14 (27)-ին Գիրսը իր հեռագրին մէջ Սաղոնովին ասում էր —

«Գերմանական զօրքերի Փրանսական ճակատում ունեցած յաջողութիւնների շնորհիւ, թիւրքերը մեզ միանալու համար յատուկ անհամբերութիւն չեն արտայայտում այլեւս» (Ադամով, էջ 68) ... Միւս կողմից, ըստ Տարլէի, գեռեւս օգոստ. 3-ին արդէն կնքւած էր թիւրք-գերմանական զաղտնի համաձայնութիւնը:

Երկրի մէջ գերմանացիների համարումը տարածուն բնոյթ էր ստանում: Օգոստոս 31-ին նրանք գրաւեցին Ամիէնը, Սեպտ. 4-ին՝ Ռէյմսը, երեք օր յետոյ՝ Մորեթը...

Արեւմտահայութեան հորիզոնը ըստ երեւոյթին ամէն տեղ սկըսում էր մթաղնել: Եւ նշանները արտայայտում էին նաեւ Սամսոնում, որի խաղաղ հայութիւնը անցեալում թիւրքերի հետ ապրել էր բարի դրացիական յարաբերութիւնների մէջ եւ կարողացել էր ղերծ մնալ մինչեւ իսկ 1895-96 թ. ջարդերից: Իշխանութիւնը աղ-գային խորհրդի միջոցով պահանջում էր հայկական թաղի ղէնքերը:

Քաղաքի մէջ եղած փոքր ի շատէ աչքառու հայերը արդէն հրսկողութեան տակ էին: Հեղահամբոյր ծխախոտալաճառ հայերը հրապարակից քաչւում փակւում էին տներում: Սեպտեմբերի վերջերին դրութիւնը աւելի վատացաւ. մէկ-երկու տեղ եղան խուզարկութիւններ...

Փոթորիկներով յղի էւ անստոյգ այդ օրերին թրքական մի նաւեկաւ խարսխեց Սամսոնի նաւահանգստում: Նաւազնացութիւնը այլեւս հազաւազիւտ էր և ուշադրութիւն էր գրաւում: Իմացեց, որ նաւը



հասել է Տրապիզոնից և մեկնում է Պոլիս: Դրանից դատ ոչ ոք ուրիշ ոչինչ չգիտէր: Մի ժամ յետոյ, սակայն, Գարահիսարցի բժիշկ Հինդլեանի միջոցով իմացայ, որ Ռոստոմը այդ նաւի մէջն է եւ ուզում է մէկն ու մէկի հետ տեսնել: Մի կերպ յաջողեցայ գնալ նաւ: Ռոստոմը, ըստ երեւոյթին, այլեւս չէր սպասում ոչ ոքի: Նրան դրտայ երկրորդ յարկի հիւրասենեակում նստած մի խումբ ղինւորականների, ոստիկանների մէջ: Առաջին տպաւորութիւնը այն էր, որ կարծես թէ ձերբակալւած է, եւ ըստ էութեան այդպէս էլ էր, միայն թէ անպաշտօն կերպով: Ռոստոմը ինձ տեսնելուն պէս վեր ցատկեց տեղից: Դուրս ելանք վերեւ եւ նաւի մէկ անկիւնը քաշեցանք: Նրբեք նրան այդպէս չէի տեսել՝ դունատ, գրեթէ հիւանդ դրութեան մէջ: Նա խօսում էր սաստիկ աճապարանքով եւ ասածների իմաստը այս էր. —

Ընկերներից ոմանք նախապէս հեռացան, ոմանք ձերբակալեցին եւ ոմանք քշեցին էրզրումից: Քաղաքում եւ շրջաններում սկսւել են ձերբակալութիւններ, խուզարկութիւններ. ժողովուրդը ղինաթափում են: Գիւղերում եղել են կոտորածներ: Կողոպուտների, բռնադրաւումների ղէպքերը անհաշիւ են: Այդպիսի տեղեկութիւններ կան նաեւ Վանի, Մուշի, Բիթլիսի շրջաններից: Ընդհանրապէս դրութիւնը շատ վատ է եւ նշաններ կան զանգաւածային ջարդերի: Ամէն միջոց պէտք է ձեռք առնէք, որքան կարելի է շուտ Սամսոնից իմաց տալու Ամասիայի, Մարգևանի եւ Սըւազի ընկերներին, որ ըզգոյշ լինեն, ոչ մի ձեւով առիթ չտան թիւրքերի դրդութեան, որովհետեւ շատ եւ շատ վատ է դրութիւնը...:

Նաւը մեկնելու վրա էր, բաժանեցինք:

Սամսոնում դրութիւնը գնալով բարդացաւ: Հայկական թաղի փողոցներում երեւացին նոր մարդիկ՝ Ռումէլիի մուհաճիւրները, որոնք առաջ գտնւում էին գիւղերում, յոյների շրջաններում: Նորեկները բնակութիւն էին հաստատում հայերի բակերում, տների պատուհանների տակ...: Հայկական թաղի ապագայ բնակիչներն էին սրանք: Թաղը ղզգոյշ էր, աւելի քան ղզգոյշ: Եւ սակայն տեղի ունեցան առաջին ձերբակալութիւնները...

Քիչ չանցած թաղը խաղաղ կծկեց ու մեկուսացաւ աշխարհից. պատերազմը սկսւել էր...:

Բեյգրադ.







Լ. ԱԳՆՈՒՆԻ